

ՀԱՅՈՑ ԳՐԻ ՄԱՍԻՆ

ՂԱԶԱՐՈՍ ԱՂԱՅԵԱՆՅԻ

Ն Ա Ռ Ա Ր Ա Ն

Մօտ օրերս լուս տեսաւ պ. Իսահակ Յարութիւնեանցի «Հալոց գիրը» վերնագրով աշխատութիւնը, որ պատկած է Սահակ-Մեսրոպեան մրցանակաբաշխութեան ամբողջ մրցանակով 1888 թւին:

Գիրքը բաղկացած է չորս հարիւր երեսից միջակ գիրքով և բաժանւած երկու մասի: Առաջին մասումը խօսում է նշանագրերի և տառերի զարդացման մասին ընդհանուրն ի նկատի առած, երկրորդ մասում իր ասելիքն ամփոփում հալոց գրերի վրայ: Զը նալած նիւթի գիտական բնաւորութեան՝ կաշկայւում է ամենամեծ հետաքրքրութեամբ ու սիրով և կառավ մղում ընթերցողին, առանց որ և է տաղտկութիւն պատճառելու Գոնէ ես մէկ օրու մէջ կարդացի այդ քրտնաջան և ստարաշխատութիւնը և չիմացալ, թէ ինչպէս վերջացաւ: Պէտք է ասեմ սակայն, որ իմ բանն ուրիշ է: Աս այդ գրքի մի ծայրից մինչև միւսը վազեցի, որ Հալոց գիրը գտնեմ, բայց վերջումն ստացալ մի ահագին, հալկական քիթ. սուս ու փոռ տեղս նստեցի և սկսեցի այս լօգւածը գրել այդ տպաւորութեան տակ:

1

Պարոն Յարութիւնեանցը վերջ ի վերջու մեղ այս նորութիւնն է բարձրում, որ Գանիէլեան ասւած գրերը Գանիէլի հնարածը չէին, այլ հին հայկական գրերի մնացորդ: Կռապաշտ հայերը, ասում է, ունեցել են իրանց աղգալին գիրն ու գրակաճութիւնը, բայց քրիստոնէութեան մուտք գործելովը այդ գրակաճութիւնը կրօնի հետ դուրս է մղել մոռացութեան տրել և անպատասցել: Այդ հին գրերիցն է ահա, որ պատահմամբ Գանիէլի ձեռքն է ընկել, և նա էլ տուել է հայերին: Այս բանն ապացուցանելու համար նա, բացի իր սեփական հալեացքից և պատճառաբանութիւններից, բերում է և հետևեալ վեց վաստերը:—

ա. Տասներեքերորդ դարի Վարդան պատմաբան վարդապետն ասել է, թէ Դանիէլի մօտ եղած գրերը 22 էին և հնուց մնացած հալոց գրեր էին. Դրանց վրալ Մեսրոպն աւելացրեց 14 դիր:

բ. Ալդ գտնւած գրերի մասին Կորիւնն ասել է. «մանաւանդ զի և նշանագիրքն իսկ՝ լալոց դպրութեանց թաղեալք և լարուցեալք զիպեցան»։ Էմինը Կորիւնի ալս ասածը թարգմանել է ալսպէս՝ «къ тому же надобно прибавить, что эти писмена были забыты и найдены случайно, որ թարգմանի՝ պէտք է ալ էլ ասել, որ ալդ գրերը մոռացել էին և գտնւել զիպածաբար Պր. Յարութիւնեանցը սխալ է համարում Էմինի ալս թարգմանութիւնը, և ինքն ասում է՝ Կորիւնն ակնարկում է ալն հանդամանքը, որ հալոց հին ալբուքներ մոռացել էր՝ տեղի տալով ալոց դպրութեանց, աբինքն ալոց գրերին և ապա կրկին լալոնելը Պարոնի ալս բացատրութիւնը փոքր ինչ կամալական է. Կորիւնն ասում է. «Մանաւանդ որ ալդ նշանագրերը թաղել էին ուրիշ դպրութիւններից, մէկ էլ լարութիւն առելը: Ալստեղ չկալ ոչ հալոց հին ալբուքն ի, ոչ էլ ուրիշ դպրութիւնների և գրերի տեղի տալ: Եթէ մեկնել հարկաւոր է, պէտք է ալսպէս մեկնել, ինչպէս Վարդան պատմագիրն է ասել ալդ միևնույնը իր խօսքերով. նա ասում է ալդ նշանագրերի մասին... «որ վասն ոչ պարզելուն զընդարձակութիւն լեզվիս, անհոգացեալ եղև չառաջնոցն»։ Այս նշանակում է, թէ ալդ գրերը ոչ թէ դուրս էին մղել ուրիշ գրերից և դպրութիւններից, ալ պակասաւոր լինելով՝ պէտք չէին եկել ոչ մի դպրութեան համար և թաղել էին: Այս հեղինակների ասածի և պ. Յարութիւնեանցի մեկնութեան մէջ ալն զանազանութիւնը կալ, որ ոչ Կորիւն և ոչ ուրիշները չեն ենթադրում, որ Դանիէլեան նշանագրերով որ և է գրականութիւն լինի եղած, իսկ պարոնը ալնպէս է բացատրում, որ կարող լինի չեղած տեղից հին գրականութիւն հանել...»

գ. Ազաթանգեղոսն ասում է, որ թէ Գրիգորի և թէ կղտերի ասածները Տրդատի դպիրները նշանագրում էին և թաղաւորի առջև կարդում: Ալստեղ էլ «նշանագիր» բառի համար վկայութիւն է բերում 20 տեղից, ուր ալդ բառը գործ է ածւած տառերի մօքով, թէև կարող էր աւելի քան քառասուն տեղից էլ վկայութիւն բերել, որ դա գործ է ածւել և ոչ-տառերի նշանակութեամբ, ալ առհասարակ նշանների, լինին գաղափարագիր, բենուագիր, թէ եզրպտական ու չինական գրեր: Բաց պարոնին պէտք է, որ անպատճառ զրանք տառեր լինին եղած, որպէս զի կարողանալ ապացուցանել մի չեղած երևութիւն: Մի բան միայն ալստեղ դժարացնում է հեղինակին: Ալդ նշանագրերը կարող էին տառեր լինել և ոչ թէ ուրիշ բան, բալց ո՛վ կարող է ասել, թէ դրանք հալերէն էին: Սրա համար իսկույն բերում է նետեալ փաստը—

դ. Տասներեքերորդ դարում անցեալը զուշակող Վարդան պատմագիրն ահա ինչ է ասում. «Թէ հուսմն իրաւ հալերէն գրեր են եղել, ալդ

բաւեր հաստատեց լեռն թագաւորի ժամանակը, երբ գտնւեցան հալ կուսակաշտ թագաւորների գրամներ հալերէն գրով գրոշմած: (Ի՞նչ գրոշմած և ո՞ւմ անուն): Սրանից հետեցնում է պ. Յարութիւնեանցը, թէ ապա ուրեմն Տրդատի զպիւրները հալ գրերով էին գրուած իսկ Ագաթանգեղոսը, իսկ Գրիգոր լուսաւորիչը, իսկ Տրդատն ինքը, դրանք ինչ գրով էին գրուած...

ե. Հալը ինչիջեանը պատմում է, որ ինքը անգլիական դեսպանի մօտ հարիւրաւոր արծաթի գրամներ է տեսել, շատ հին հալկական գրերով (հ, տ, պ, կ, ճ, և այլն): Բայց մէջերումը ձաւնաւոր չը գտնելով չի կարողացել կարդալ: Հապա «ալը ծա ատուածն» ինչպէս էր կարողանում կարդալ հ. ինչիջեանը:

Այս բոլոր փաստերը բաւական ազդու և զօրաւոր ապացոյցներ համարելով որ նոյն իսկ Տրդատի ժամանակ հալերէն գիր ու գրականութիւն կար, սրանց ուժն առաւել ևս սաստկացնելու համար բերում է հետեւեալ վեցերորդ փաստը, որ մի հրաշալի գիւտ է:

զ. Ալզ գիւտն անողը Փիլիստրատոս անունով մի պատմաբան է, որ ապրելիս է եղել Տրդատից էլ շատ առաջ: Այս մարդը իր մի աշխատութեան մէջ ասել է—*պատմում եմ, որ մէկ անգամ Պամֆիլիստրատ բռնեւ է մի լովագ, շինքին մի ոսկի մանեակ կապած, իսկ ալը մանեակի վրայ գրած է եղել հալերէն տառերով—հետեւալը—«Արշակ թագաւոր Նիւսեալ աստուծուն»: Այստեղ սճնւում է ալզ լովագի պատմութիւնը, նրա հոտառութիւնը, Ալզակի մօտ ընկնիլը, նրանից փախչիլը: Մարդ իմանալ է կարողացել կարդալ ալզ ինչիջեանի համար անվերծանելի գիրը:*

Սրանք են ահա հեղինակի այն հաստատուն սիւները որոնց վրայ կառուցել է իր չորսհարիւր տարեկանի աշխատութիւնը: Ինքը հիւանում է իր բերած փաստերից և ոգևորում, որ՝ ուղիղն ասած՝ մեծ պատիւ է բերում իբրև՝ իբրև մի անմեղ և անկեղծ աղագսիրի: Կարծես մտքումն ասում է.— Ես ձեզ ցոյց կը տամ, ո՞վ գերմանացի ինքնահաւան պրոֆեսորներ, որ իմ աղգը մեծ աղգ է, և մինչդեռ դուք չը գիտէիք ձեր կալըս շինելը, մենք հալերս Սոկրատի և Արիստոտէլի հետ էինք գլուխ գլխի խփում: Պէտք է այս էլ ասել, որ եթէ գիրքն ալ տենդենցիան չուենար, հեղինակը չէր էլ պատկուլ ամբողջ մրցանակով, որովհետև ալզ պատկազրութեան համար էլ կալ հաս ու չհասի ինչիր:

Չ

Հիմա գանք մերն ասենք, թէկուզ դրա համար մեր գլխին փչէ պսակ դնեն, որ իմ կարծիքով աւելի փառաւոր է:

Այս տեսակ խնդիրները իսկապէս շատ գիւրին կերպով լուծելու խնդիրներ են, միայն տարաբախտաբար մեղանում սովոր են պահանջելու իրական ապացոյց, ականատես վկայ, ինչպէս ալ պահանջում են հաշ-

տարար դատաւորները: Կան խնդիրներ, որոնց համար պէտք չէ պահանջել վկաններ, ալ եթէ լինին էլ, զրանք մերժելի են իբրև սուտ վկաններ մի սուտ և չեղած բան իբրև եղած և կատարած բան հաստատելու համար կոչած: Եթէ մենք մեր հին կեանքի վրայ նայելու լինինք մեր պատմաբանների ասածի վրայ հիմնելով առանց կանխապէս այդ ասածները անաչառ կրիտիկալի բովից անց կացնելու, շատ անգամ բոլորովին կը մոլորուինք և կը սխալուինք: Այինչ վիճար բան չը կալ քան չեղած բանի համար պատճառ փնտրելը: Թէ ինչու է եղել և ինչ նպատակով: Քանի քանի ալալիսի բաներ կան մեր թէ գրականութեան և թէ կեանքի մէջ: Սուան ու ճշմարտը որոշելու համար մեզ առաջնորդ պիտի ունենանք տիեզերական օրէնքը: Ինչ որ համաձայն չէ այդ օրէնքին, նա սուտ է, թէկուզ միլիոնաւոր վկաններ լինին: Ալս է ահա մեր տեսակէտը և այս տեսակէտով էլ պիտի մտնենք մեր ձեռք առած խնդրին:

Ակսնք հեշտից և դէպի դժւարը գնանք:

Ինչ էր Դանիէլի դատածը, արդեօք մի մատեան հին հայերէնով գրած, թէ մի ալբուրնի որոշ թւով բաղկացած: Եթէ լինէր մի մատեան հայերէն, բայց ծանօթ տառերով գրած, օրինակ պարսկական, ասորական կամ լուճական, այդ գիրին ծանօթ հայագէտը աւելի դիւրութեամբ կը կարդար նոյն մատեանը, չի եթէ գրած լինէր մուսուլման, անպատասխան կամ վերջապէս նոր հնարած գիրով, դա նոյն իսկ հալի համար կը լինէր մի տեսակ անընթեռնելի ծածկագրութիւն, որի բանալին դեռ պիտի գտնէր, որ ապա թէ կարողանար կարդալ: Իսկ եթէ լինէր մի տեսակ ալբ ու բեն, ոչ ոք կարող չէր դրա ոչ բանալին գտնել և ոչ իմանալ, թէ ինչ լեզուի գրեր են դրանք, քանի որ դրանք պաշտօնական նշաններ են, բառ չեն, որ կարդալով իմանան, թէ նա ինչերէն է: Ալ խնդիր է, եթէ այդ ալբուրնը իր հետ ունենար և բանալին, ալիքն մի ծանօթ լեզուով բացատրած լինէր, թէ որ գիրը ինչ ձայնի նշան է: Բայց կարող է արդեօք պատահել, որ գրականութիւնից ոչ մի հետք չը մնայ թէկուզ մի կտոր, մի ալ գրքի կազմից կպած, բայց մնալ այդ մատենագրութեան ալբուրնը, այն էլ մի հատ միայն: Ալ խնդիրն ահա այս կերպ արծարծելով մենք խորնացու վկայութիւնը և միւսներինն էլ գտնում ենք շատ բնական և ուղիղ, և այդ ալն է, որ Դանիէլը կամ ինքն իրանից, կամ մի հալի առաջարկութեամբ ասորական գրերը ձեռնդրելով կատկայցել էր հայերին, ասելով՝ «Եթէ կամենում էք ձեր սեփական գրերն ունենալ համեցէք տարէք»: Բոլորովին այնպէս, ինչպէս Մեսրոպն արաւ վրացոց համար: Ալս լուրը թագաւորի ականջն է ընկնում, նա էլ իմաց է տալիս կաթողիկոսին և Մեսրոպին: Ուղարկում են Վահրիճ անունով մի ճարտարամիտ մարդ, որ Դանիէլից սովորում է այդ գրերի ձայները և նրանց կապակցելու եղանակը և բերում ու սովորեցնում է Մեսրոպին: Ալ օրից սկսում են այդ գրերով բան գրել կամ թարգմանել, որ

սկզբումը Մաշտոցը կը լինէր անշուշտ, որի մէջ էր ամփոփւած ծիսակատարութիւնը և ժամերգութիւնը, և նոյն գիրքն էլ սկսում են աւանդել ուսումնարաններում: Այդ ուսումնարանում մենակ մանուկներ չէին կարգացնում, այլ արդէն ասորագէտ տիրացուներին և քահանաներին, որոնց համար մի առանձին դժարութիւն չը կար ընդամենը մի գիրք սովորելու և նոյն իսկ անգիր անելու գլխէ գլուխ:

Այս Գանձիւնի շրջանի մասին մեր ականատես պատմիչները արհամարհանքով են խօսում, որոշ կերպով չեն ասում, թէ որքան ժամանակ տեսց: Չեն ուզում ուղղակի խստովանել, որ արդ գրեթէ ինքը Գանձիւն էր շինել: Այս հանգամանքներն արդեւ ցուց տալիս միայն, որ դրանց ժամանակ ասորիներն ատելի էին դարձել հալերի աչքումը, շարունակ կուր ունէին միմեանց հետ, հալերը նրանց դուրս էին մղում իրանց եկեղեցիներէրց, հացի խնդիր կար մէջ տեղը, նրանք էլ մատնութիւններ էին անում, լափշտակում էին կաթողիկոսական գահը: Բաւական է միայն վիշել Սուրմակի, Բրքիշուի և Շմուէլի վարմունքը արդ ժամանակի մասին մի որոշ դադափար կազմելու համար: Հալերը քաղաքականապէս կախումն ունենալով պարսիկներէրց, հոգեորապէս և մտաւորապէս էլ ասորիներէրց ունէին կախումն: Յուս ունէին, որ թէ մէկից և թէ միւսից կաղաուին լոյների օղնութեամբ: Այս պատճառով էլ երեսները շրջեցին ասորիներէրց և լոյներին դիմեցին: Թողին Նդեսիւն, որ իրանց միակ ուսումնավարն էր և քաշեցին դէպի Աղէքսանդրիա: Ասորա-հայական շարաքերութեան պէս եղաւ և հալա-վրացական շարաքերութիւնը: Ինչ որ էին ասորիները մեզ համար, նոյնը եղանք և մենք վրացոց համար: Ասորիներէրց ճնշում էինք, իսկ վրացիներին ճնշում, մէկի շիգրը միւսից էինք հանում: Այսպէս է կեանքի օրէնքը, ինչ պէտք է անես: Զարմանալի չէ ուրեմն, որ վրացիքն էլ Մեսրոպին չեն համարում իրանց գիր տուող, ասում են՝ մենք շատ վաղուց ունեցել ենք արդ գիրը և իրանց արդ կարծիքը հիմնում են դարձեալ—իբր թէ գտնած—չին դրամների վրայ: Հալոց գրի հեղինակը վրացիներին չի ուզում արժանացնել արդ փառքին, բաց ուզում է, որ ականատես ասորիները մեզ իր ուզած փառքին արժանացնեն:

Այսպէս ան՝ բնական և քաղաքական հանգամանքները մտաւորապէս կռելով, մենք գտնում ենք, որ Գանձիւնի գիր տալը հալերին՝ անժիտելի է, իսկ արդ գրերի հետ կապել կարելի չէ մի չհղած և չը լուած գրականութիւն:

3

Գրականութիւնը մի ճրագ է, մի լուս. ուր որ նա վառւի, ճառագալիներ կարձակէ իւր շորս կողմը: Հալերը, որ միշտ շարաքերութիւն են ունեցել գրականութիւն ունեցող հիթանոս ազգերի հետ, եթէ գրականութիւն

ունենալին, առաւել ևս կը ծաղկեցնէին նրան, քան թէ ալդ եղաւ հինգերորդ դարում: Այժմուհետև մեր միջից էլ դուրս կը գալին բանաստեղծներ, ճարտասաններ և փիլիսոփաներ: Այն ինչ գրականութիւն է, որ կեանքի մէջ ոչ մի հետք չի թողնում, ալ մերթ լուրջի վզիցն է կախում, մերթ չեղած դրամների վրայ դրոշմում, առանց մարդոց վզից կախելու և առանց կոթողների վրայ դրոշմելու:

Գրականութիւն կար, ասում են, բայց քուրմերն իրանց մեհեաններում ծածկած էին պահում, լուս աշխարհ չէին հանում, չէին ազգայնացնում, ժողովրդականացնում:

Մենք չենք ունեցել ոչ քրմութիւն ազգային և ոչ կուսապաշտութիւն ժողովրդական: Եթէ հալ ազգը կուսապաշտ լինէր, նրա մէջ կը ծագէր կուսագործութեան արեւստը և լառաջ կը բերէր մի տեսակ հեթանոսական ճարտարութիւն: Հայերը ողբապաշտ էին, իսկ ալդ ողիները բնակչւում էին անտառներում, ջրերում, լեռներում և հովիտներում ¹⁾: Հայերը նոյն էին հնումը, ինչ որ ալսօր եղիցի քուրդերը, սրանց պէս պարզ, սրանց պէս անմուղ բնութեան զաւակներ, Հալի մեհեանն իր օջախն էր, որ միշտ վառ էր պահում կամ անթեղնում, որ չը հանգչի: Ի հարկէ ալսպէս չէր նա իր նախապատմական կեանքում, բայց ալսպէս էր ալն ժամանակ, երբ ենթադրում է, թէ նա գիր ու գրականութիւն ունէր: Ալդ ժամանակ հատ ու կտոր եղած մեհեանները իրանց դպրութեամբ, եթէ ունէին սեփական դպրութիւն, հալիական չէին, ալ օտար, նորամուտ, բերովի և ձեռնհաս միմիայն դաղթական դասակարգին, ալն էլ մասամբ միալն:

Անհատի, նունպէս և հասարակութեան և ազգի—որովհետև դրանք էլ անհատներից են բաղկացած—ողու զարգացման մէջ մի բնական ներդաշնակութիւն կալ: Քարէ գործիք ունենալը և երկաթի գործածութիւնից զուրկ լինելը, կարող է մեր երեակալութեան մէջ չառաջ բերել մի ժողովուրդ, որի կենցաղավարութիւնը ներդաշնակ կը լինի իր գործ զրած գործիքների հետ: Մի կոթող, մի արձան, մի աշտարակ կարող է մեզ համար չափ դառնալ նրանց շինողների քաղաքակրթութեան աստիճանը որոշելու համար: Էլֆէլլի շինած աշտարակը մի կարգէ դուրս բան չէ, եթէ ինկատի ունենանք իր ժողովրդի մտաւոր զարգացման աստիճանը: Բաբելոնի կախեալ պարտէզները և աշտարակաշինութիւնը, ընդունելով իբրև կատարած վատտ, ցոլց են տալիս շինողների մտաւոր զարգացման մի ալնպիսի աստիճան, որ միայն ալդ երևութի վրայ հիմնելով կարող ենք ալդ մարդկանց վերագրել ուրիշ շատ հրաշալիքներ էլ: Կարող ենք ասել

¹⁾ Ալսօր իսկ մեր ժողովրդի երեակալութեան մէջ դատարկ տեղ չը կալ, բոլորը լցած է ողիներով, ալնպէս որ ոտք դնելու տեղ չունի:

անկարելի բան է, որ ալդ ճարտարութեանը հասած մի ժողովուրդ գիր և գրականութիւն չունենար:

Երբ որ մի ժողովրդի մտաւոր զարգացումը հասնում է գիտակցարար շինելու և ստեղծելու աստիճանին, դուրս գալով բնազդմամբ ապրելու շրջանից, աշունհետև նա մենակ մի բան չի գտնում, այլ շատ բան, մի գիւտը հեշտացնում է դանել մի ուրիշ գիւտ, սա էլ մի ուրիշը: Ամեն ոք սկսում է կատարելագործել իր ունեցածը՝ երկրագործն իր վար ու ցանքաքը, ալգեդործն իր տունին ու ծառը, արհեստաւորն իր գործն ու գործիքը, վաճառականն իր առն ու տուրը, գրողն իր գիրն ու գրիչը, մէկ խօսքով երկրի կուլտուրան աճում, զարգանում, բարեփոխւում և կատարելագործւում է իր մասերի մէջ՝ ներդաշնակութիւն պահելով բնական կարգով: Պատահում է, այն, որ երբեմն նրա ողու այս կամ այն չատկութիւնը գերակշիւ է հանդիսանում միւս չատկութիւնների վրայ, մի բան անհամեմատ աւելի է ծաղկում, քան միւս բան, բայց դա լինում է ժամանակաւոր, աւժամանակ. ներդաշնակութեան օրէնքը միշտ ձգտում է հաւասարակշռութիւն ձգել խելքի և երևակալութեան ու կամակամայութեան ոտորձնների ու թուխքների մէջ: Աճող երկխալի խօսքն ու քալը իրար հաւասարակշռում են, հոգու և մարմնի շարժումները միմեանց հաւասարադօր են: Այս երևութն ենք նկատում ահա ինքն ուր ուղի զարգացող մի ժողովրդի մէջ:

4

Արդ ինչ ունինք մեր աշխարհում, սրպիսի հալիական ճարտարութիւն, որոնց վրայ նախելով ասէինք.— «Այս բանն ունեցողը գիր չունենալ չէր կարող»: Սրա հակառակ շատ բան ենք գտնում ու չը գտնում, և սրտի խորքից հառաչամ, թէ «Այս բանը չունեցողը և ունեցողը գիր ունենալ չէր կարող»:

Ինձ կը պատասխանեն, թէ մեր հին աշխարհում գտնւում են բեռագիր արձաններ: Շատ ուրախ եմ: Բայց ինչն ալ արձանները բեռագիրող հալերը չը տառագրեցին և ուրիշ արձաններ: Եթէ չը կան տառագրած արձաններ, ալդ ոչ միայն ցուց է տալիս, որ հալերը իւրահնար տառեր չունէին, այլ ալն էլ է ապացուցանում, որ բեռագիր արձանները հալի ձեռքի գործեր չեն, այլ կամ բոլորովին օտար, կամ պատէրով շինած օտարի ձեռքով: Հալերն արձանագործութեան և արձանագրութեան այնքան անհմուտ էին, այնքան զուրկ ամեն ալդ տեսակ ճարտարութիւնից, որ նոն իսկ մեր գրերը գտնւելուց լետոյ էլ մենք երկար ժամանակ չունեցանք ոչ արձանագործութիւն և ոչ արձանագրութիւն: Ինքը Մեսրոպը գրչութեան արեստին հմուտ չէր: Լաւ գրելու արհեստն էլ մի ջոկ բան էր, ինչ որ գրէին, պէտք է արտագրել տալին նոն իսկ չ է:

վարպետներին: Այս էր պատճառը, որ շատերը միմիայն կարողալ գիտէին առանց գրել իմանալու և շատերն էլ միայն գրել, առանց կարողալ իմանալու: Գրելը նիւթի—մագաղաթի—թանգութեան և սակաւութեան պատճառով էլ դիրամատչելի չէր ամենին:

Միակ ճարտարապետական շէնքը, որի փլատակներն այսօր էլ երևում են, այդ Տրդատի հովանոցն է: Սա ինքս նշմարել եմ նրա թափթըրիած քարերի վրայ լուծական գրերի հետք, և հէնց ինքը շէնքն էլ լուծական գործ է և ոչ հալի: շինած է պատուէրով, լոյն վարպետների ձեռքով: Եթէ Տրդատի դպիրները, այնքան ճարտար էին հալագրութեան մէջ, որ մարդկանց խօսակցութիւնը խսկոյն գրի էին առնում ծածկաբար, որ թագաւորին ցոյց տան, ինչո՞ւ այդ մարդիկը իրանց այդ հրաշալի շնորքը չէին ցոյց տալիս և Տրդատի հովանոցի վրայ մի երկու բան գրել տալով նրա սրբատաշ քարերի վրայ:

Ամեն ինչ, որ հալոց անւանեալ աշխարհումն է գտնուում, այդ չի նշանակել, որ անպատճառ հէնց հալինն էլ պէտք է լինի նա: Այդ այդպէս կը լինէր, եթէ Հալաստանը մի կուսական երկիր լինէր, հալն այդ հողի վրայ լինէր ստեղծած և ապրած, առանց տեղի տալու օտար հոսանքի: Կար ժամանակ, որ հէնց այդպէս էլ հաւատում էին մեր առաջնակարգ դպիրները, բայց այսօր մի երկիր և ազգ ուսումնասիրելու համար կալ բոլորովին այլ մեթոդ: Այսօր այդ երկրումը շատ խօսք և բառեր կան, շատ աշխարհագրական անուններ, որոնք իրանց կազմութեամբ մատնում են իրանց և ցոյց տալիս, որ հակական ծագումն չունին, այլ մի դուրս մղած կամ անցած գնացած և կամ հալի հետ ի մի ձուլած ազգի: Սև ինչ ֆեառ ունի, որ ալպէս լինի: Միթէ դրանով մերհայրենասիրութիւնը կը պակսի: Սա կարծում եմ ընդհակառակը: Երբ ես մտածում եմ, որ իմ ազգը մի դառամած և իր դերը կատարած պրծած ազգ չէ, այլ նոր, թարմ, ջահէլ, ես ուրախանում եմ անսահման ուրախութեամբ: Ով որ երևակալում է նրա անցեալը, ես երևակալում եմ նրա ապագայ հակալական քալերը: Այ՛ո, մի օր պիտի ջախջախւին Արտաւազդի դարաւոր կապանքները և նրա անեղ ձալնից պիտի թնդան ու որոտան Հալաստանի լեռներն ու ձորերը և նոր հողի ու նոր կեանք պիտի փչւի քարացած աշխարհի սրտում:

Ծ

Գիր և գրակաճութիւն ունենալու մի խոշոր պատճառաբանութիւնն էլ այն են բերում, թէ՛ դրոց լեզւի ծաղկիլը հինգերորդ դարում այնպիսի մի հակալական գործ է, որ ինքն իրան ցոյց է տալիս, որ հալերն ունեցել են ազգալին ճոխ գրակաճութիւն, եթէ ոչ, ինչպէս կարող էին թարգմանել Աստուածաշունչը, որ թարգմտի թարգմանութեանց է համարուում, և

զանազան փիլիսոփայական գրածներն ևս: Այս կարծիքի մարդիկը շատ վսեմ ոճով են խօսում, զանազան բարձր աստիճաններ տալով առաջին շքանի մատենագրութեանը, որով և զինաթափ են անում ընթերցողին և նախապաշարում:

Մի ազգ կարող է շատ ճոխ լեզու ունենալ, առանց զիր ունենալու, և ընդհակառակը՝ զիր ունենալ, առանց ճոխ լեզուի: Սթէ փիւնիկեցիք, եգիպտացիք և չինացիք զիր ունէին, իսկ հայերն ու պարսիկները՝ ոչ, այդ դեռ ապացուց չէ, որ նրանց լեզուն ճոխ էր, իսկ հայերինն աղքատ: Անհատներ կան, որ շատ ճոխ լեզու ունին, իսկ խելք ասածիցդ և ոչ մի մտալ: Նշանաւոր մաթեմատիկոսների լեզուն անհամեմատ աղքատ է, քան թէ նշանաւոր բանաստեղծներինը, կան ազգեր, որ աւելի բանաստեղծ են, կան, որ աւելի մաթեմատիկոս, հաշուող, կշռող, գործնական, սրամիտ, աչքաբաց, հնարող: Սրկիրը, կլիման, պարապմունքը, ցեղական լատկութիւնը մէկին ալ հոգեկան լատկութիւններ է տալիս, միւսին ալ: Մէկին սուր լեզու է տալիս, միւսին սուր միտք: Մէկին աւազակ է շինում, միւսին տալիս է խաղաղ կեանք: Մէկին սարէսար և ծովէծով է ձգում, միւսին տալիս նստակեաց կեանք և ալն: Հայերը չունէին զիր և գրականութիւն, բայց ունէին շատ ճարտար և ճոխ լեզու. ունէին ամենահարուստ բանաւոր գրականութիւն: Ոչ մի քրիստոնեակ ազգ չունի ոչ մեր Շարականը և ոչ մեր Նարեկը, երկու զուտ բանաստեղծական հրաշագործութեան և ճոխ լեզու ու երեսակալութեան արգասիք: Այս դէնք կշռի մէկ նժարումը և դառնանք միւս նժարին:

Սուրբ գրքի լեզուն մի ժողովրդական և աղքատութեան չափ մի պարզ լեզու է: Գրխատուի տւած քարոզները ժողովրդին, իրանց պարզութեամբն է, որ և րկնալին ևն դառնում: Գաւթի սաղմսը զլսէ ի զլուխ մի հովերգութիւն է: Նա իր թագաւորական գահի վրայ էլ իր հօր ոչ խարներն արածացնող պարզ հովիւն է: Այս պարզ նահապետական կեանքից հայերը շատ և շատ բարձր էին կանգնած իրանց լեզովը: Մեր բանաւոր երգերը հատուկոր բաներ չէին, ալ նրանցից ամեն մէկը արկածներով լիքը մի վէպ էր, և եօթն օր եօթը գիշեր էր տևում գրանցից ամեն մէկը ծալէ ի ծալր ասելու, պատմելու և երգելու համար: Այդ մարդիկն ունէին առասպելական վշողութիւն, մէկ մէկ մատենադարան էր գրանց զլուսը, որոնց մէջ ամբարած էին պահում ազգի աւանդութիւնները: Գրանք հատ ու կոտոր մարդիկ չէին, ալ այդ պարապմունքն ունէին ամբողջ գիւղերով, որոնց հետքերը դեռ մինչև ալսօր էլ կան, թէ և լեզուն փոխւած: Ուրեմն թնչ դժւարութիւն կարող էր լառաջ գալ սուրբ գիրքն ալսպիսի մի լեզուով թալգմանելու համար, մինչդեռ ալսօր իսկ աւետարանի տարածողները ոչինչ դժւարութեան չեն հանդիպում աւետարանը թարգմանելիս կիսավայրենի և կիսակիրթ ազգերի լեզուով:

Այն դժուարութիւնը, որ այս առիթով չառաջ են բերում մեր պատմաբանները, և նոյն իսկ Խորենացին, որ ասում է, «Քանզի անգէտք էին մերում արւեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանիւր», այս խօսքը մեզ համար այն է պարզում այսօր, որ Մեսրոպն ու Սահակ արխօսքը մեզ համար այն է պարզում այսօր, որ Մեսրոպն ու Սահակ արւեստաւոր լեզուն չը տեսան ոչ Սահակը և ոչ էլ Մեսրոպը։ Գրոց լեզուն այս արւեստովն է, որ չլացնում է շատերի աչքը, որ դառնում է մի հսկայական բուրգ շատերի համար, և չեն կարողանում ըմբռնել, որ այդ բուրգը կոփածոք քարերի մի կուտ է և զուրկ ազգային լեզու բնական կենդանութիւնից, որ դա մեռած էր նոյն իսկ իր ծնած ժամանակ։

Կրտսեր թարգմանիչների մէջ ամենից երևելի հանդիսացողը, ամենից շատ աշխատողը և ամենից շատ ապրողը Մովսէս Խորենացին է։ Շատերը և Չամչեանն էլ՝ կարծում են, որ Մովսէսը սուրբ գրքի թարգմանութեանը մասնակցած չէ։ Բայց դա խոշոր սխալ է. հապա ո՞վ պիտի կատարելագործէր՝ իր ասելով՝ «ի բազում մասանց թերացեալ գործը», քանի որ հէնց դրա համար էլ ուղարկել էին նրան Աղէքսադրիա, «ի լեզու պանծալի, ի ստուգ լոզանալ ճեմարանին վերաբանութեան»։ Մէկ տեղ էլ ինքը փշեցնում է Սահակ Բագրատունուն, թէ ինքը «այր մի է ծերացեալ և թարգմանութեանց պարապեալ»։

Երևակայենք մեզ, որ Մովսէսը՝ նախ քան բարձր ուսման գնալը՝ ոչ միայն քաջ հմուտ էր իր մալրենի լեզվին և իր վարդապետների բոլոր գիտութիւնը սեփականած, այլ և անհատապէս օժտած վառ երևակալութեամբ և բանատեղծ բնութեան չատուկ ձիրքերով, որով նա ամփոփած էր իր մէջ մանկութիւնից լսած ժողովրդի բանաւոր գրականութիւնը։ Այս մարդն ահա քաջ հմտանալով Աղէքսանդրիայի ճեմարանում այն ժամանակաւ ճարտասանական և հետտրական արւեստին, հանդէս եկաւ մեր նորածիլ գրականութեան մէջ մի բոլորովին նորածն լեզուով, ստեղծեց մի բոլորովին նոր դպրոց, որի ազդեցութեանը ենթարկեց թէ ցայնժամ և թէ այնուհետև եղած դպրութեան լեզուն։ Այս լեզուով ոչ ոք կարող չէր գրել, մինչև լաւ չըսովորէր այն արւեստը, որով գրած էր, և այդ բաւական չէր դեռ ևս, պէտք է գիտենար և նոյն իսկ չունական լեզուն, որ այնուհետև ըմբռնէր նրա բառերի դասաւորութեան եղանակը և համաձայնութիւնը։ Սրա համար էլ այդ լեզուն մնաց միայն այդ մէկ դարումն ամփոփած, սրբանալով սուրբ գրքով և դառնալով եկեղեցական լեզու։ Այնուհետև ոչ ոք այլ ևս չը կարողացաւ այդ լեզուով գրել, բայց ինչ գրած էլ որ մօտաւորապէս չը նմանեց դրան, նա կորաւ իբրև անպէտք բան, իբրև զոհիկ և անարւեստ լեզուով գրած։

6

«Հայոց գրի» հեղինակի մի պատճառաբանութիւնն էլ հին հայերի չարաբերութիւն ունենալն է փիւնիկեցոց հետ, Նթէ մի անգիր ազգ չարաբերութիւն ունենալով զիր ունեցող ազգի հետ, վեր առնէր նրա գիրը, էլ աշխարհիս երեսին ոչ մի անգիր ազգ չէր լինիլ: Հին հայերի չարաբերութիւնը իրանցից լուսաւոր ազգերի հետ նոյնն էր, ինչ որ պատօսերի և չէր քէզնեբի չարաբերութիւնն է մեզ հետ: Ինչպէս սրանցից մէկը իր իւզն ու պանիրն է մեզ տալիս, միւսը՝ իր ձին ու ետինջին, նոյնպէս էլ հայերը կարող էին իրանց խաղողն ու գինին և էջն ու ջորին տանել ի վաճառ, բայց հայերը չունէին թանգազին գորգեր և ծիրանի գործածքներ:

Այս պատճառաբանութիւնն ալնքան թուլ է, որ սրա վրայ ես չեմ ուզում կանգ առնել, որովհետև շատ կերկարի, եթէ սկսեմ մի առ մի բացատրել ազգերի փոխադարձ չարաբերութեան դրական և բացասական կողմերը: Այնքան միայն կասեմ, թէ ով որ ծանօթ է միայն տեսակափոխութեան թէօրիալին, նրա տւած վճիռները սխալ կը լինին, եթէ ծանօթ չէ նաև տեսակապահութեան թէօրիալին: Մտաւոր զարգացման մի աստիճանից միւսին անցնելը ոչ դիւրին և ոչ կարճ ժամանակի գործ է և կախումն ունի ամենազօրեղ ցնցումներից, ամենակենսական պահանջներից: Տաճիկն ու պարսիկն էլ պատճառաբանութիւն ունին լուսաւորեալ Նւրոպալի հետ, բայց մտում են նոյնը, ինչ որ կան: Հինը չը քալքալած՝ նորը նրա տեղը բռնել կարող չէ: Հին հայերը գիր ու գրականութիւն ունենալու ոչ պահանջ ունէին և ոչ նախապատրաստութիւն: Այդ հայերի համար է, որ Խորենացին ասում է—«Այլ ինձ թուի, որպէս արժմ՝ և առ հինսն Հայաստանեաց լեալ անսիրելութիւն իմաստութեան և երգարանաց բանատրաց, վասնորոյ աւելորդ է մեզ և այլ չաղազս անբանից արանց թուլամտաց վարենեաց ճառել:

Այ կը մնամ մեր հանճարաւոր քերթողհօր համախօս ու համակարծիք ծառան ամենախոնարհ հպատակութեամբ, մինչև աւելի համոզեցուցիչ փաստերով չապացուցանեն, որ հեթանոս հայերն ունեցել են իրանց ազգալին գիրն ու գրականութիւնը: Իսկ իմ ընթերցողներից կը խնդրեմ, որ իմ այս գրածքը քննադատութիւն չը համարեն: Ես չեմ քննադատել պ. Յարութիւնեանցի գիրքն ամբողջապէս, այլ միայն նրա տենդենցիան, յախնքն ան ձգտումը, որով նա ուզում է հաստատել, որ հին հայերը գիր ու գրականութիւն են ունեցել: